

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

Ե Ր Բ Ե Մ Ն

Երբեմն իմ մէջ ես կ'որոնեմ,
 Մըքին, նըրքին եւ խուսափուկ
 Աւանտներն՝ որոնց մէջէն
 Ճամբու դրի շաւ սիրելի
 Մասեր փրբթած իմ խորհերէն:
 Մութին ինկան կաթիլ կաթիլ,
 Օրերն աղբուր ու միամիտ
 Պատանութեան:

Յետոյ անդարձ թրուան, գացին,
 Հաւերն ոսկի երազներուն,
 Լեւան ետին ժամանակին:

Այսպէս է կարգն այս աշխարհին:

Տարիներու ցեցը կերաւ,
 Աստի՛ն ընտիր ու նըրբահիւս
 Ու նըկարէն
 Իմ հաւաստին:

Եւ օրերու աւագին մէջ
 Ինկան անձայն՝
 Սուրբ փրբանքներ,
 Զոր կը պահէ երբեմն հոգին,
 Գաղտնի նոյնիսկ իրմէն, կեանքէն:

Սիրսս էր բարի,
 Ու բաւեցի հոգին իմ պարզ
 Բոլոր մարդոց
 Հեռու մօտիկ:

Ու չեմ ցաւիր այս ամէնուն,
 Զի հարուստ է
 Մարդը չափովն իր տրածին:

Ու չեմ ցաւիր այս ամէնուն,
 Զի հոգիին վըրայ առկախ
 Կը պըլպըլայ շողքը անմահ
 Յիշատակին այդ ամէնուն՝
 Երէկուան պէս բարձր ու անոյց,
 Որ վեր կ'առնէ զանոնք նորէն

Նըման լոյսին՝ որ չի մեռնիր
Երկրի բոլոր խաւարներէն :

Զունիմ ես ցաւ
Ինձմէ փախչող այդ բոլորէն ,
Երակներէն իմ հեղեղուած՝
Դաւոսին վըրայ երազներուս ,
Ակօսին մէջն իմ սէրերուն ,
Զուրերն ի վար պատահաններուն :

Գիրն այսպէս է
Ապրումներուն մեր ամէնուն :

*

Կըսկիծ մը կայ որ չի մեռնիր ,
Այսօր առաւ մահերէն վերջ՝
Դամբարանին վըրայ սրտիս .
— Պատկերն է ան
Ինձմէ բըխած՝
Հէնքը հագած այն երազին
Զոր բաժնեցինք :
Տըղայ մըն էր
Հէնքը հագած իմ հոգիին :
Երկարեցի ձեռներս անոր
Ու բաժնեցինք հաւասք ու սէր ,
Հաց ու ժըպիս ,
Տըսմութիւններն այս աշխարհին :

Դեռ երէկ էր որ ան զընաց ,
Գընաց անդարձ ,
Թէեւ ներկայ շուրջս ամէն տեղ ,
Կը լըսեմ ձայնն ու կը նայիմ
Աչքներուն ,
Բայց ա՛լ օտար ու տարագիր :

Տըխուր՝ կ'ըսեն , թաղել մասերն
Փըրթած խորունկ մեր ալիներէն .
Բայց չէ ըսուած չափը ցաւին ,
Մահէն առաջ մահն երբ կ'իջնէ
Բարեկամ զոյգ հոգիներուն .
Որ մեզ մեզի դէմ կը բաժնէ
Եւ իրարու
Անծանօթներ մեզ կը թողու :

ԵՂԻՎԱՐԴ